

կղզին առաջուց զգալի կերպով աւելի ընդարձակ էր, և ծովու երեսէն շատ աւելի բարձր՝ քան այժմեան վիճակին մէջ։ Մարդկանցմէ երեսի վրայ թողուած և քանդիչ հեղեղներու տարերաց վնասուց ենթակայ, երթարով օրէ օր կը փոքրկանայ, և քարերն անգամ ջրոյ մէջ հետզհեաէ կ'անհետանան։ Այս կղզւոյն մէջ անթիւ բազմութիւն թունոց կը գանուի, որոնց կուով թանձր ծածկուած է։

Զըլտըր ծովակէն ոչ այնքան հեռի (10 վերսդ), կը գտնուի խօսաբին մեծ լիճը, որոյ տարածութիւնն է 25 քառակուսի վերսդ։ արևելեան կողմը շղթայակապ լերանց հետ միացած է։ Այլ շատ զարմանալի է, որ բնաւ կենդանի էակի նշան շունի և մէջը թողուած ձկներն անգամ արագ անհետացան։ Այս կղզւոյն հիւսիսային կողմը՝ ուր ջուրն աւելի խոր է, գրեթէ 10 ձուածե արհետական կղզիք կան, որք հազիւ ջրոյ երեսը կ'երեխին, և գալարով ծածկուած են։ Այս կղզեաց ժողովն ալ նոյնպէս ջրաբնակ մարդկան բնակելու ծառայած է։ Հիմայ բազմութիւն բադից կը գըտնուի անդ։ և անոնց հաւկիթներն շրջարնակ չայք կը ժողովեն, վասն զի Տաճիկք չեն դպիիր անոնց, և բնաւ չեն չնջուիր, վասն զի ինչպէս ծանօթ է, շատ բազմութեամբ հաւկիթ կ'ածեն, (իւրաքանչիւրն մինչև 30 հատ)։ և հետզհեաէ առնուածներուն տեղնոր կը հասցընեն։

Յ' Աւալանտ Շաբաթաթերթէ

## ՓՈՒՔՐԻԿ ՍԱՎՈՅՑԱՑԻՆ

Այ խեղճ տըղայ, ել և գընա Փրանկիա,  
ի՞նչ օգուտ սէրս, երբոր աղքատ մնացի ես։  
Երջանկութիւն հեռու տեղ է, հո՞ վիշտ կայ.  
Գընա տըղաս, բաղդըդ անշուշտ կը շինես։

Քանի որ կաթս քեզ կը լինէր բաւական,  
Քանի որ ես կարող էի աշխատել,  
Քու մի ժըպիտդ մօրըդ էր բաղդ անսահման։  
Ոք չէր կարող ինձ այն ատենը ասել.  
« Մի՛ համբուրել այդ քոյ սիրուն երեխայն »։

Արդ՝ ես այրի, ոյժս, շէնութիւնըս կորան.  
Հիւանդ, տըխուր՝ որոյ դիմեմ ես պիտի

Քեզի համար . աղքատներէն ի՞նչ մուրամ :  
Թո՞ղ խեղճ մարիկդ , փոքրիկ մանկիկ Սավոյե ,  
Ե՛լ և գընա Տիրոջ ցուցած քեզ ճամբան :

Որչափ հեռուն լինիս , յիշէ քաշուած տունս ,  
Եկ , այնոր մէջ , վերջին անգամ մօրըդ գիրկ .  
Ա՛ռ մայրենի իմ գըրկախառն օրհնութիւնս .  
Օրհնութեան տեղ մի ջերմ համբոյրն է հերիք :

Ճես այն կաղնին , որ հոն՝ հեռուն է կանգնած .  
Մինչեւ այն տեղ կարնամ գնալու ես քու հետ .  
Անտի հայրիկդ , չորս տարի է որ , գընաց .  
Ես կը սպասեմ ի զուր նորա դարձին յետ :

Թէ հոսլինէր , կ'առաջնորդէր քեզ տրդաս ,  
Քու բաժանումն ինձ չէր լինել այսպէս ծանր .  
Տասը տարուան գեռ գուն չըկաս , այլ կ'երթաս .  
Աղօթելէ զատ ի՞նչ կարնամ քեզ համար :

Ի՞նչ կ'անսն դուն , թէ Աստուած քեզ չըպահէ ,  
Զարերուն մէջ , — որք յաշխարհիս խիստ շատ կան , —  
Մարիկդ քովդ չէ որ՝ համբերել խըրատէ .  
Ախ ինչ դըժար հաց շոնենալո՝ որ քեզ տամ :

Ա.Ա ի՞նչ անենք . թող Աստուծոյ կամք լինին .  
Բայց դուն մի լար իմ սիրական աղաւնիս .  
Գոհ ցըցուր քեզ մեծամեծաց մօտ շեմին .  
— Թերես յիշես ելրեմն մարիկդ , գորովիս . —  
Ա.Ա չէն երգէ որ՝ հարուստներն ախորժին :

Երգէ . քանի որ դառնացած չէ քու կեանկդ .  
Մուկիկդ հետդ առ , և ճամբորդի փոքր ծըրար .  
Կըրկնէ երգերն որոնք մայրիկդ որորանկդ  
Տատանելով , երգէր մեղմիկ սիրաբար :

Թէ առաջուան ունենայի ոյժո վըրաս ,  
Զեռքէդ բոնած հետըդ ես ինքս կու գայի .  
Ա.Ա իմ օրերս համբուած են արդ , տրդաս ,  
Ճանապարհին՝ դուցէ մահըն ինձ հասնի .  
Բայց ես կ'ուղեմ մեռնիլ ուր որ եմ ծընած :

Արդ այս վերջին խըրաստ արած լուս մըտիկ  
Որ՝ Աստուած քեզ իւր երեսէն չի ձըգէ.  
Մ'իշտ գոհ եղիր երբոր կու տան քեզ հացիկ.  
Թանուն Տիրոջ, մեծամեծներն ազաշէ.  
— Հօրըդ խօսք է, — Բարով երթաս, երջանիկ :

Մըեն մըտաւ մօտի լիրանց յետի գին.  
Մ'այրը ասաց. « Հարկ է որդ եակ բաժնուել » .  
Կաղնեաց ներքի կ'երթայր տըղայն առանձին.  
Մ'երթ կը դառնայր. այլ չէր իշխել արտասուել :

### ¤

« Անօթի եմ, ով անցորդներ, օգնութիւն.  
Կը տեղայ ձիմն, բոլոր գետինն է սառած .  
Ես կը դողամ, հով է, եղաւ իրիկուն .  
Ծածկոյթ չունիմ որ՝ տեղ մ'քաշոփմ կըզկըդած :

Ձեր պալատներ հազար բարեօք են լեցուն,  
Շեմին վրայ ես ծունը դըրած կ'աղաշեմ.  
Քըշիկ մի բան տուէք աղքատ, խեղճ տըղուն,  
Փոքրիկ դըրամ, ինձ բաւական է արդէն :

Ինձ ասացին որ՝ կը գրսնես Փարիզ հաց,  
Մ'եծամեծներն աղքատներուն միշտ կ'օգնեն,  
Կը պատմէին այդ ի մէջ մեր անոտառաց.  
Արդ՝ ես աղքատ, դէպ ի ձեղ ձեռք կը պարզեմ :

Տուէք դուք ինձ սակաւիկ մի ուտելու.  
Հրաման արէք, կը վազեմ ես, ուր ուզէք.  
Դողդոջ ձայնիւըս պատրաստ եմ երգելու,  
Եթէ հաճոյ կը լինին ձեզ իմին երգք :

Ո՞վ, չեն լըսել, արագ կ'անցնի ու կ'երթայ  
Լըմընցընել ցորեկի տօնն՝ իրիկուն .  
Կը լըսուին չեն ուրախ ձայները ահա .  
Մ'ինչ դեռ հարկ է ինձ ապաստան գիշերոյն ,  
Մըտնալ ձըգուած այս խըղիս մէջ բացակայ :

Ահ, երբ արդեզք հայրենի տունս կիսաքանդ  
Պիտի գըտնամ. ոհ տուէք ինձ իմ խըրճիթ,  
Յերեկոյին չորցած պանիրն իբր ակրատ,  
Յետ որոյ մեք կ'աղօթէինք սիրտ ի թինդ,  
Թուսալով որ՝ չեմք մընար միշտ տարաբաղդ:

Ախ իմ մարիկս, դուն ասացիր « Երջանիկ  
Լինիս որդիս, և շուտ գարձիր տուն առ մեզ ».  
Աւազ, թէ որ այս տեղ մեռնիմ գեռ փոքրիկ,  
Չըկարնալով ոչ մի ընծայ բերել քեզ :

Այլ ոչ. պէտք չէ մեռնիմ այսպէս ես տըզայ.  
Սիրուս կ'ասէ « մի՛ լըքանիր, եղիր քաջ ».  
Ի զնւր յոյսեր, ո՞վ իմ վերատ կը գըթայ.  
Մուկիկս քաղցած, ահա մեռաւ իմ առաջ »:

Տըկարացած, գըլուխն գըրաւ գետնին՝ վար.  
Զինն տեղալով ծածկեց մարմնոյն կէսն՝ յոգնած.  
Զինք արթընցուց մի մեղմիկ ձայն հողմավար,  
« Ելիր, կ'ասէր, որ շըսառիս աստ թըմրած ».

« Թող առ մեզ գայ ապաստանի խեղճ անտունն,  
» Լալ պէտքը չէ », հովին մէջէն կը լըսուէր .  
» Զ'ի վոանդի պէտք է մենք տանք օգնութիւն,  
» Մ'եր զաւակունք են որբ տըզայքը՝ անտէր » :

Սըգահանդերձ երկու կանայք էին քովն.  
Նա՝ հպատակ նոցա ձայնին կանգնեցաւ,  
Նախ շըփոթած, ապա փայլուն տեսնալով  
Վարդարանի արծըթէ խաչն, սիրտ առաւ  
Ու գընաց հետերն, երեսը խաչ հանելով:

Պ. Ա. Գիւր (Guiraud)

Թարգ. Հ. Ք. Գուշներնեան

